Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի
«Շիրակի Նռանե մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի
2026 թվականի հուլիսի «09»-ի N 65-Լ հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ «ՇԻՐԱԿԻ ՆՌԱՆԵ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻՍՏԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ, ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Շիրակի Նռանե մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության<br>1.Երաժշտության ղեկավար 0,5 դրույք /66000 ՀՀ դրամ աշխատավարձ/<br>2.Մեթոդիստ, տնօրենի ուսումնական գծով տեղակալ 0,25 դրույք /33000 ՀՀ դրամ աշխատավարձ/ | • **Որակավորման պահանջները**<br>• Հաստատության մեթոդիստի, տնօրենի ուսումնական գծով տեղակալի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br>• Հաստատության երաժշտության ղեկավարի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն կրթություն նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի որակավորմամբ և երաժշտական կրթություն (երաժշտական կամ արվեստի դպրոց):<br>• **Ընդհանրական պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության երաժշտության ղեկավարի, մեթոդիստի, տնօրենի ուսումնական գծով տեղակալի պաշտոն | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կա մ սահմանափակ գործունակ.<br>2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4)դատապարտվել է հանցագործության համար և | 1) դիմում (Ձև 1).<br>2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).<br>3) անձը հաստատող փաստաթուղթ.<br>4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5) ինքնակենսագրություն (Ձև 4).<br>6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.<br>7) այլ պետությունների քաղաքացիները՝ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | զբաղեցնողները պետք է իմանան պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.<br>ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները: | դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | Հայաստանի Հանրապետություն ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br>8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.<br>9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |
| | | **Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները:** | | **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |
| 2 | Մրցույթն անցկացնելու վայրը, | Դիմումների և փաստաթղթերի ընդունումը | | Դիմումների և փաստաթղթերի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | օրը, ժամը | | | ներկայացման ժամկետները |
| | **Վայրը՝** ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ.Շիրակ, Գլխավոր փողոց 4-րդ փակուղի /մանկապարտեզ 44/3<br>**Օրը՝** 2026 թվականի օգոստոսի 12-ին ժամը՝ 12:00 | Փաստաթղթերը ներկայացնելու,լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզ, գ.Շիրակ, Գլխավոր փողոց 4-րդ փակուղի /մանկապարտեզ 44/3<br>**Հեռ. 077-38-89-56**<br>**Էլ. հասցե՝** mankapartez.shirak@mail.ru<br>**Մրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:**<br>**Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/am/news/11978:** | | 2026 թվականի հուլիսի 09-ից մինչև 2026 թվականի օգոստոսի 05 -ը ներառյալ |
| | | **Փաստաթղթերի ընդունումը՝** ամեն օր, ժամը 09:00-16:30, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից:<br>**Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել** akhuryan.am **կայքերում**: | | |